

Ս.Խ.Մայրապետույան, Ա.Դ.Թադևոսյան, Զ.Ս.Ալեքսանյան, Բ.Թ.Ստեփանյան,  
Հ.Մ.Գալստյան, Ա.Դ.Թովմանյան

**ԲԱՑՈԹՅԱՆ ՀԻԴՐՈՊՈՍԻԿԱՅԻ ՊԱՅՄԱՆԱՆԵՐՈՒՄ ՍՆՂԱՐԱՐ ԼՈՒԾՈՒՅԹԻ  
ՏԱՐԲԵՐ ԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՏՐՈՂԱՅԻՆ ՌԵՎԱՆԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ  
(Դադորդում 2)**

**Ներածություն:** Սննդարար լուծույթի խտությունը էական և բազմակողմանի ազդեցություն ունի արմատների կողմից սննդատարրություն, ջրի կլանման, կլանված իոնների հարաբերակցության, բույսերի աճի, զարգացման և արդյունավետության վրա (1, 4-12):

Խիստ նոսր սննդարար լուծույթներում բույսերը ի վիճակի չեն կլանելու անհրաժեշտ քանակությամբ սննդատարրություն, իսկ բարձր խտությունների դեպքում, դրանց մեջ օսմոտիկ ճնշման պատճառով, արգելակվում է բույսերի նորմալ աճն ու զարգացումը, ինչի հետևանքով դրանք չըրանում են (2): Այդ իսկ պատճառով բույսերի արիեստական աճեցման պայմաններում մեջ նաև նաև աճեցման պայմաններում լուծույթներ (2-3 գ/լ):

Մեր նախորդ հետազոտություններում արդեն հաստատվել է, որ Արարատյան դաշտի բացօքայ հիդրոպոնիկայի պայմաններում կիտրոնային ռեհանի բուսահումքի, նրանում երկրորդային ծագում ունեցող մի շարք կարևորագույն միացությունների առավելագույն ել ապահովում է Չեսնոկովի և Բազիրինայի սննդալուծույթը (3): Ուստիմասիրվել է նոյն այդ սննդալուծույթի տարրեր խտությունների ազդեցությունը կիտրոնային ռեհանի արդյունավետության և դրա ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու դեղաքիմիական ցուցանիշների վրա:

**Նույր և մերող:** Փորձերը դրվել են 3 տարրերակով. 1. 0,5; 2. 1; 3. 1,5ս: Բուսանմուշների ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու դեղաքիմիական վերլուծությունների մերժմերը ներկայացված են "Դադորդում 7-ում": Կատարվել են քերթի 4 հար՝ I-հուլիսին, II-օգոստոսին, III-սեպտեմբերին և IV-հոկտեմբերին: Բուսանմուշների սղության պատճառով ներկայացրել ենք I և II հարերի գումարային տվյալները:

**Առյունքներ և բննարկում:** Փորձարկված խտություններից գգալի է 1ս տարրերակի առավելությունը (աղ. 1-3), որը ինչպես դեղահումքի չոր քաշով (1,2-1,4 անգամ), այնպես էլ դեղարանական ցուցանիշներով՝ եթերայուղերի (1,3-1,6 անգամ), դարաղանյութերի (1,1-1,2 անգամ), երատրակտիվ նյութերի (1,9-2,8 անգամ) և ֆլավոնոիդների (1,3-2,1 անգամ) ելուկ գերազանցում է մյուս տարրերակներին:

#### Այլուսակ 1

Սննդալուծույթի տարրեր խտությունների ազդեցությունը կիտրոնային ռեհանի արդյունավետության վրա

| Սննդարար լուծույթ              | Բույսի բարձրությունը, սմ | Թաց դեղահումքի քաշը, գ/բույս | Չոր դեղահումքի քաշը, գ/բույս |
|--------------------------------|--------------------------|------------------------------|------------------------------|
| Չեսնոկովի և Բազիրինային (1,5ս) | 53                       | 567                          | 90,7                         |
| --- // --- (1ս)                | 59                       | 741                          | 106,5                        |
| --- // --- (0,5ս)              | 55                       | 578                          | 76,9                         |
| ԱԵՏ <sub>05</sub>              |                          |                              | 15,6                         |

Այսուակ 2

Կիտրոնային ռեհանի հումքի դեղաքիմիական ցուցանիշները  
սննդալուծույթի տարբեր խտությունների և հարերի պայմաններում, %

| Ցուցանիշներ         | 1,5Ն |      |      | 1Ն   |      |      | 0,5Ն |      |      |
|---------------------|------|------|------|------|------|------|------|------|------|
|                     | I+II | III  | IV   | I+II | III  | IV   | I+II | III  | IV   |
| Եթերա-յուղեր        | 0,59 | 0,87 | 0,56 | 0,77 | 0,78 | 0,76 | 0,54 | 0,78 | 0,57 |
| Դարաղա-նյութեր      | 4,9  | 8,8  | 8,7  | 5,1  | 8,8  | 9,0  | 5,3  | 9,9  | 9,5  |
| Էքստրակ-տիվ նյութեր | 34,8 | 14,0 | 15,5 | 35,9 | 38,0 | 12,1 | 20,1 | 13,0 | 16,3 |
| Ֆլավոնոիդ-ներ       | 3,7  | 2,5  | 1,7  | 3,2  | 3,4  | 1,3  | 3,2  | 1,4  | 1,4  |

Այսուակ 3

Կիտրոնային ռեհանի հումքի դեղաքիմիական նյութերի ելք  
սննդալուծույթի տարբեր խտությունների պայմաններում, գ/րույս

| Սննդարար լուծույթ             | Եթերա-յուղեր | Դարաղա-նյութեր | Էքստրակ-տիվ նյութեր | Ֆլավոնոիդ-ներ |
|-------------------------------|--------------|----------------|---------------------|---------------|
| Չեսնոկովի և Բազիրինայի (1,5Ն) | 0,65         | 6,9            | 18,7                | 2,4           |
| - - / - - (1Ն)                | 0,82         | 7,8            | 34,8                | 3,1           |
| - - / - - (0,5Ն)              | 0,50         | 6,5            | 12,2                | 1,5           |

Այսուակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ Չեսնոկովի և Բազիրինայի 1Ն սննդալուծույթում աճեցված բույսերի դեղահումքում մեծացել է կարևորագույն որակական ցուցանիշ եթերայուղի պարունակությունը, ընդ որում այդ մեծացումը» մյուս տարբերակների համեմատությամբ, զգալի է հատկապես I+II և IV հարերի ժամանակ:

Միաժամանակ, վերոհիշյալ խտությամբ սննդալուծույթի պայմաններում, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսնեֆք» գրանցվել է հակաբորբոքային և սպազմալիտիկ ազդեցությամբ օժտված էքստրակտիվ նյութերի առավելագույն տոկոսային պարունակություն: Իսկ սննդալուծույթի խտության նուրացմանը գուգնթաց բուսահումքում ավելացել է դարադանյութերի պարունակությունը: Փորձարկված տարբերակներում դարաղանյութերի մեջ կուտակում տեղի է ունենում III և IV հարերի ժամանակ: Ֆլավոնոիդների պարունակության առումով, 0,5Ն խտությունում գրանցվել է դրա զգալիորեն նվազում (1,8-2,4 անգամ)՝ հատկապես III հարի ժամանակ:

Սննդալուծույթի տարբեր խտությունները որոշակիորեն ազդում են կիտրոնային ռեհանի մի քանի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ցուցանիշների փոփոխման վրա: Ընդ որում, սննդալուծույթի ցածր խտության տարբերակում (0,5Ն) դիտվել են ջրի ավելի շարժուն ֆրակցիայի, իսկ համեմատարար բարձր խտություններում կապված ջրի, քջահյութի օսմոտիկ ճնշման, "a+b" քլորոֆիլի և վիտամին C-ի առավելագույն քանակություններ (աղ. 4): Ըստ բերված տվյալների, փորձի բոլոր տարբերակներում, հիմնականում, պահպանվել է նույն օրինաչափությունը՝ բույսերի բուռն աճման շրջանում (օգոստոս) տերևներում գրանցվել է ջրի ավելի շարժուն ֆրակցիայի բարձր, միաժամանակ կապված ջրի, քջահյութի օսմոտիկ ճնշման և վիտամին C-ի ցածր մեծություններ: Մինչդեռ սեպտեմբեր ամսին դիտվել է հակաբակ երևույթը. տերևներում ջրի ավելի շարժուն ֆրակցիայի պարունակությունը նվազել է շուրջ 10,6-19,2 %, իսկ քջահյութի օսմոտիկ ճնշումը բարձրացել 39-64 %-ով:

Կիտրոնային ռեհանի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ցուցանիշները  
սննդալուծութի տարրեր խտությունների դեպքում

| Ցուցանիշներ  | 1,5n    |           | 1,0n    |           | 0,5n    |           |
|--|---------|-----------|---------|-----------|---------|-----------|
|  | օգոստոս | սեպտեմբեր | օգոստոս | սեպտեմբեր | օգոստոս | սեպտեմբեր |
| Ընդհանուր ջրի պարունակությունը, %                  | 87,6    | 83,6      | 89,0    | 85,5      | 89,2    | 86,8      |
| Ազատ ջրի պարունակությունը, %                       | 57,2    | 46,2      | 63,7    | 56,9      | 69,5    | 58,8      |
| Կապված ջրի պարունակությունը, %                     | 30,4    | 37,4      | 25,3    | 28,6      | 19,7    | 28,0      |
| Ազատ և կապված ջրի հարաբերությունը                  | 1,9     | 1,2       | 2,5     | 2,0       | 3,5     | 2,1       |
| Բջջահյութի օսմոտիկ ճնշում, մթն Բլորոֆիլ "a+b", մգ% | 3,84    | 6,32      | 3,72    | 5,20      | 3,57    | 4,97      |
| Կարոտինուդներ, մգ %                                | 137,8   | 134,5     | 129,1   | 121,7     | 110,2   | 104,8     |
| Վիտամին C, մգ %                                    | 40,3    | 46,0      | 39,1    | 37,2      | 34,8    | 34,5      |
| Վիտամին C, մգ %                                    | 43,9    | 47,5      | 31,2    | 37,9      | 13,6    | 47,9      |

**Եղուակացություն:** Բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում կիտրոնային ռեհանի բարձր արդյունավետություն է ապահովել Չեսնոկովի և Բազիրինայի 1n-ոց սննդալուծությունը: Այս տարրերակում բույսերը չոր դեղահումքի քաշով՝ 1,2-1,4 անգամ, մեծ բույսից ստացված եթերայուղի՝ 1,3-1,6; դարաշանյութերի՝ 1,1-1,2; էքստրակտիվ նյութերի՝ 1,9-2,8 և ֆլավոնուդների ելույ՝ 1,3-2,1 անգամ գերազանցում են սննդալուծութի ցածր (0,5n) և բարձր (1,5n) խտություններում աճեցված բույսերի վերոհիշյալ ցուցանիշներին:

Mairapetyan S.Kh., Tadevosyan A.H., Alexanyan J.S., Stepanyan B.T.,  
Galstyan H.M., Tovmasyan A.H.

**INFLUENCE OF DIFFERENT CONCENTRATIONS OF THE NUTRIENT SOLUTION ON THE PRODUCTIVITY OF CITRIC BASIL UNDER OPEN-AIR HYDROPONIC CONDITIONS  
(Communication 2)**

**Summary**

The effect of different concentrations (1,5n; 1n; 0,5n) of the nutrient solution on the productivity of citric basil was observed. It was founded, that from all tested concentrations the normal concentration (1N) of the nutrient solution worked out by Chesnokov and Bazirina guarantees the maximum dry weight of medicinal raw material (1,2-1,4 times), and the highest output of essential oil (1,3-1,6), tannins (1,1-1,2 times), extractive substances (1,9-2,8 times) and flavonoids (1,3-2,1 times).

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Մայրապետյան Ս.Խ., Ալեքսանյան Զ.Ս., Թադևոսյան Ա.Հ., Ստեփանյան Բ.Թ., Բունիաթյան Ռ.Ժ., Գասպարյան Ա.Վ. Հնգարաժան առյուծագիի անհող աճեցման հնարավորությունը և արդյունավետությունը, ֆիզիոլոգա-կենսաքիմիական և

դեղաքիմիական առանձնահատկությունները.-ԴՊԻ "Հաղորդումներ", N 29, 1999, էջ 11-16:

2. Մայրապետյան Ս.Խ., Թաղևոսյան Ա.Գ., Ալեքսանյան Զ.Ս., Ստեփանյան Բ.Թ., Բունիածյան Ռ.Ժ., Թովմասյան Ա.Վ. Եռարաժան կատվալեզվի անհող աճեցման հնարավորությունը. ֆիզիոլոգա-կենսաքիմիական և դեղաքիմիական առանձնահատկությունները.- ԴՊԻ "Հաղորդումներ", N 30, 2005, էջ 7-14:
3. Մայրապետյան Ս.Խ., Ալեքսանյան Զ.Ս., Թաղևոսյան Ա.Գ., Ստեփանյան Բ.Թ., Գալսոտյան Յ.Ս., Թովմասյան Ա.Վ., Դովիաննիսյան Ա.Ս. Բացօքա հիդրոպոնիկայի պայմաններում տարբեր սննդարար լուծույթների ազդեցությունը կիտրոնային ռեհանի արդյունավետության վրա.-ԴՊԻ "Հաղորդումներ", N 30, 2005, էջ 64-67:
4. Булгаков Н.Н. Влияние концентраций питательного раствора на продуктивность яровой пшеницы.- Бюллетень ВИУА, 1981, N56, с.63-65.
5. Вахмистров Д.Б., Воронцов В.А. Соотношение элементов минерального питания в среде и рост растений. 6. Зависит ли оптимум соотношения от суммарной концентраций и наоборот?. -Физиология растений, М., 1995, том 42 , N2, с.254-261.
6. Давтян Г.С. Гидропоника как производственное достижение агрохимической науки.- Ереван, 1969, с.76-79.
7. Майрапетян С.Х., Алексанян Дж.С. Водный режим растений в условиях гидропоники.- Ереван:, Из-во АН Армении, 1961, с.81-117.
8. Майрапетян С.Х., Тадевосян А.О. Оптимизация минерального питания растений в условиях гидропоники.-Ереван:, Из-во «Гитутюн» НАН РА, 1999, 230с.
9. Сабинин Д.А. Избранные труды по минеральному питанию растений.-М. Наука, 1971, с.111-117.
10. Kardamanov Ju.K. Dependence between increase of level of osmotic pressure of nutrient solution and absorption of ions by pea plants.- Mineral nutrition of plants. vol. V, Sofia, 1988, p.157-163.
11. Mairapetyan S.Kh., Alexanyan J.S., Kalachyan L.M. Characteristics of the citric sorghum mineral nutrition in open- air gravel culture in Armenia.- Soilless Culture, Intern. periodical of ISOSC, 1989, vol. V, N1, p. 37-45.
12. Melian P.G., Sintes G.F. Tomatoes soilless culture. IV. Influence of the total concentration of the nutrient solution and its potassium contents.- ISOSC Proc. V Intern. Congr. on Soilless Culture, Wageningen, 1980, p. 111-118.